



ԵՐԿՈՒԵԱԹԻ, 14 ՄԱՐՏ, 2016

ՏԵՐՈՒՍԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 100

ԵՐՔ ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Տիրոջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ:
Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ,
ցնծութեան երգերով եկէք անոր ներկայութեան:
Գիտցէք թէ Տէրը ինքն է Աստուածը:
Ան մեզ ստեղծեց, եւ մեքն անորն ենք.
Իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ ինք կ'արածէ:
Գոհաբանութեամբ մտէք անոր տաճարը,
օրհներգութեամբ մտէք անոր շրջափակէն ներս.
շնորհակալութիւն յայտնեցէք իրեն,
օրհնաբանեցէք իր անունը:
Բարի է Տէրը, անոր սէրը յաւերժական է,
եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւատարմութիւնը:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 7:1-40)



ԱՄՈՒՐԻՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՅՐԻՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ (7:25-40)

«Ոչ թե արգելքներ կը դնեմ ձեր վրայ, այլ կ'ուզեմ որ պարկեշտությամբ եւ անգրաղ միտքով Տիրոջ հնազանդության նուիրուիք» (35 հմր): Այս էր ու է մօտեցում Պօղոս Առաքեալին, որպէսզի իւրաքանչիւր քրիստոնէայ հաւաքացեալ այս երկրաւոր ու ժամանակաւոր կեանքը ապրի այնպէս, որ կարենայ ծառայել Աստուծոյ ամենայն պարկեշտությամբ, նուիրումով ու անգրաղ միտքով: Ինչ ալ ըլլան մեր կարգավիճակները, թող անոնք պարճառ չդառնան, մեր Աստուծոյ ծառայութեանը մէջ: Որովհետեւ պիտի չկարենանք երկու փութերու ծառայել:

Առաքեալը շարունակելով իր հայրական հոգածու թելադրութիւնները Կորնթոսի համայնքին, այս անգամ իր խօսքը կ'ուղղէ ամուրիներուն եւ այրիներուն: Ամուրիներ, այս պարագային, որոնք ընդհանրապէս չեն ամուսնացած: «Ամուրիներուն վերաբերող ձեր հարցումին Տիրոջմէ հրաման մը չունիմ: Բայց ես՝ իբրեւ Տիրոջմէ ողորմութիւն գրած մէկը, որուն կարելի է վստահիլ, այսպէս կը խրապեմ» (25 հմր): Այնպէս ինչպէս ամուսնացածներու պարագային, Առաքեալը յարակ թելադրութիւն ունէր Քրիստոսի կողմէ փրուած: Այս պարագայի, սակայն, ոչ ինչ ունի, այլ՝ պարզապէս իր փեսակէտը կը յայտնէ: Տեսակէտ մը, որ ըսելու սիրոյն ըսելիք մը չէ որ կը փոխանցէ, այլ՝ այդ մասին խորհած, մտածած, ու մանաւանդ Աստուծոյ ողորմութիւնը գրած եւ Աստուծոյ Հոգին է որ այսպէս ըսել կու տայ Առաքեալին:

«Կը խորհիմ որ իրենց վիճակը լաւագոյնն է: Նկարի ունենալով վերահաս նեղութիւնը, աւելի լաւ է որ մարդ ինչպէս որ է՝ այնպէս մնայ» (26 հմր): Պօղոս Առաքեալ երկու բառերու գործածութիւնը ունի. լաւ եւ լաւագոյն: «Լաւ կ'ընեն եթէ ամուսնանան»: «Ամուրիներու պարագային, իրենց վիճակը լաւագոյնն է»: «Լաւ»ի ու «լաւագոյն»ի հարցը նկարի առած.

1. Վերահաս նեղութիւնները.
2. Աստուծոյ ծառայելու կոչումը պարկեշտությամբ եւ անգրաղ միտքով:

Այսպէղ Առաքեալը կ'ակնարկէ նեղութիւններու մասին: Նեղութիւններ, որոնք կրնանք գալիք հալածանքները ըլլալ. նեղութիւններ, որոնք այն հոգսերն են, որ իւրաքանչիւր ընկերակցի մէջ կրնայ ըլլալ: Ուստի, «Ամուսնութեամբ կատարուած ես կնոջ մը. մի՛ փորձեր բաժնուիլ: Ամուսնութեամբ կատարուած չես մէկուն. կին մի՛ փնտրեր» (27 հմր): Անգամ մը եւս կը մտաբերէ կարգավիճակները. ամուսնացած եւ ամուրիներ: Անոնք, որոնք կը մտածէին իրենց կինը արձակելու: Իսկ անոնք, որոնք կը մտածէին ամուսնանալու: «Եթէ ամուսնանաս՝ մեղք գործած չես ըլլար. կամ ռեւէ ամուրի կին եթէ ամուսնանայ՝ մեղք գործած չըլլար: Բայց անշուշտ ամուսնական կեանքին յարուկ նեղութիւններ պիտի ունենան, որոնցմէ զերծ պիտի ուզէի քեզմէ ձեզ» (28 հմր): Յստակօրէն Առաքեալը ցոյց կու տայ, որ ամուսնանալը մեղք չէ, այլ հարցը կը կայանայ անոր մէջ, որ ամուսնական կեանքին յարուկ նեղութիւններ պիտի ունենան, որոնք կրնան արգելք ըլլալ Տիրոջ ծառայելու: Որովհետեւ ամբողջ նպատակը այս կեանքին ու հաւաքացեալ մարդուն Տիրոջ ծառայութեան մէջ ըլլալն է, իբրեւ պարտաւորութիւն գալիք յաւիտենական կեանքը ժառանգելու: Ուստի, որպէսզի կարենանք ամբողջութեամբ Տիրոջ ծառայութեան նուիրուիլ նկարի ունենալ այս երեւոյթները:

Անգամ մը եւս, Առաքեալը ոչ թէ կ'անտեսէ ամուսնական կեանքը, այլ նկարի ունի, որ «Ժամանակը կարճացած է. հետեւաբար՝ կին ունեցողներն ալ չամուսնացածներու պէս թող ապրին. սպացողները թող սուգ չունեցողներու պէս ապրին, ուրախացողները՝ չուրախացողներու պէս, հարուստները՝ աղքատներու պէս. աշխարհը վայելողները՝ չվայելողներու պէս. որովհետեւ մեզի ծանօթ այս աշխարհը անցնելու վրայ է» (29-31 հմր): Այս բոլորը կը նշանակեն, ոչ թէ անտարբերությամբ ապրիլ, ոչ թէ անհոգ եւ կամ պարտաւորութեան փախչիլ, այլ՝ քրիստոնէայ հաւաքացեալը չքարոյսի աշխարհիկ կեանքի պայմաններով, այլ կարենայ այնպէս մը ապրիլ, որ «այսօր»ը իբրեւ վերջին օր ըլլայ, պարտասօր Տիրոջ գալուստին:

Ահա թե ինչու Առաքեալը կ'ուզէ որ հոգերէ գերծ ըլլան, «Որովհետեւ կին չունեցողը միայն Տիրոջ հոգը կ'ունենայ, ջանալով Տիրոջ կամքը ընել. մինչդեռ ամուսնացած մարդը երկրաւոր հոգեր կ'ունենայ, ջանալով իր կնոջ կամքը կատարել. որով երկուքի բաժնուած կ'ըլլայ: Նոյնպէս ալ, ջամուսնացած կինը կամ կոյսը Տիրոջ հոգը կ'ունենայ եւ կը ջանայ մարմինով եւ հոգով Աստուծոյ նուիրուիլ. մինչ ամուսնացած կինը երկրաւոր հոգեր կ'ունենայ, ջանալով իր ամուսինին կամքը կատարել» (32-34 հմր): Այսպէս արքայապարտեամբ, Առաքեալը երբեք չ'ըսեր, թէ ամուսնացած մարդը չի կրնար Տիրոջ ծառայել: Այլ՝ ջամուսնացած մարդը աւելի կրնայ փրամադրուիլ Տիրոջ ծառայութեան: Որովհետեւ նաեւ կրնայ ամուսնացած չըլլալ, բայց նաեւ Տիրոջ ծառայութեան նուիրուած չըլլալ:

Այս բացատրութիւնները, թելադրութիւնները իբրեւ արգելքներ չէ որ կը դնէ Առաքեալը անոնց դիմաց, «այլ կ'ուզեմ որ պարկեշտութեամբ եւ անգրաղ միտքով Տիրոջ հնազանդութեան նուիրուիք» (35 հմր):

Գալով «Խօսեցեալներու պարագային, եթէ ոեւէ նշանուած մարդ կը խորհի թէ իր նշանածին քով ամօթով պիտի մնայ եթէ ջամուսնանայ, եւ ցանկութիւնն ալ այնքան զօրացած է իր մէջ՝ որ պէտք է ամուսնանայ, թող իր կամեցածին պէս ընէ. մեղք գործած չըլլար. թող ամուսնանայ» (36 հմր):

«Ան որ իր սիրտին մէջ հաստատուած որոշում առած է, առացն ոեւէ հարկադրանքի, եւ կրնայ իր կամքին վրայ իշխել, եւ իր որոշումն է՝ պահել իր նշանածը՝ առանց մարմնական յարաբերութեան, լաւ կ'ընէ» (37 հմր): Այս բաժինը կը ներկայացնէ անոնք, որոնք խօսեցեալներ են: Այս հաստատուածին կապակցաբար, կայ նաեւ այն փեսակէր, որպէս թէ խօսքը կ'ուղղուի ոչ թէ խօսեցեալներուն այլ հօր մը, որ ունի կոյս աղջիկ, որ եթէ ուզէ այդպէս պահել առանց ամուսնութեան: Սակայն, խօսքը շար աւելի կը պարզաճի անոնց, որոնք խօսեցեալներ են, որ փակաւին մարմնական յարաբերութիւն չկայ անոնց միջեւ: Ահա եթէ երբեք կրնան իրենց կամքին վրայ իշխել առանց հարկադրանքի, կրնան փոկել եւ յաղթահարել այդ ցանկութիւնը՝ աւելի լաւ կ'ընեն, իսկ եթէ երբեք պիտի չկարենան աւելի լաւ է որ ամուսնանան: «Այնպէս որ, ով որ կ'ամուսնանայ՝ լաւ կ'ընէ, իսկ ով որ չ'ամուսնանար՝ աւելի լաւ կ'ընէ» (38 հմր):

Ի վերջոյ, վերջին երեւոյթը մը, այս անգամ այրիներու պարագան: Որովհետեւ, վերջ ի վերջոյ, անոնք ալ մաս կը կազմեն համայնքին, եկեղեցիին: Անոնք ալ կրնան ունենալ պարագաներ: Ասոնց պարագային Առաքեալը կը թելադրէ, որ անոնք կրնան վերամուսնանալ այն պարագաներէ կողակիցը ալ ողջ չէ: «Ոեւէ ամուսնացած կին ազատ չէ, որքան արեւն որ ամուսինը ողջ է. իսկ ամուսինին մահէն ետք ազատ է, որու հետ որ ուզէ՝ կ'ամուսնանայ. միայն թէ՛ քրիստոնէայի հետ: Բայց աւելի երանելի կ'ըլլայ՝ եթէ փրուած խրատիս հետեւի եւ մնայ այնպէս՝ ինչպէս որ է հիմա» (39-40 հմր):

Վերամուսնանալ այն պարագային

1. Երբ կողակիցը այլ չկայ, կը ննջէ:
2. Հաւատարմութեան հետ:
3. Երբ չի կրնար իշխել իր ցանկութիւններուն:
4. Պոռնկութեան մէջ չիմալու:
5. Արքայութեան համար զուակներ ծնանելու:

Ի վերջոյ, այս բոլոր բացատրութիւնները, Պօղոս Առաքեալ կու փայ Աստուծոյ Ս. Հոգիին առաջնորդութեամբ եւ իմաստութեամբ, ըսելով. «Կը խորհիմ որ Աստուծոյ Հոգին է որ այսպէս ըսել կու փայ ինձի» (40 հմր): Սա կը նշանակէ, թէ որքան ալ մեր մարդկային փրամաբանութիւնը, դատողութիւնը լաւ ըլլան, ջմոռնանք երբեք առաջնորդուիլ Աստուծոյ Ս. Հոգիով, որպէսզի փրուած թելադրութիւններն ու խրատները ըլլան Աստուծոյ կամքին համաձայն: Ահա, Պօղոս Առաքեալ որքան ալ ունի առաքելական հեղինակութիւնը, բայց ի վերջոյ կ'առաջնորդուի եւ իր ըսելիքները կ'ըսէ Աստուծային իմաստութեամբ եւ Ս. Հոգիին առաջնորդութեամբ: